ՆԱԶԱՐ.– Կամա՛ց: Ձենդ քաղաքավարի՛ հանի: Պալատ է, ախոռ չէ, հայվան: (Ամենքին) Դե, հիմի սաղ եղէք: (Սաքոյին) Իշխան Սաքո՛. դրօշակը թող:

ՍԱՔՈ.– (Դրօշակը տնկում է թախտի ծայրին:)

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ.– (Խոնարհ գլուխ են տայիս ու հեռանամ:) Սաքոն հետեւում է նրանց Սենեկապետը հետեւում է սրան:

ՆԱԶԱՐ.– (Լաւ ընկողմանելով թախտի վրայ) Ուխխա՛յ… Էո՛ո՛ֆ…

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս է մտնում մի մանկլաւիկի հետ, որ ձեռին մատուցարան ունի՝ վրան քիշմիշ: Սենեկապետը նշան է անում մանկլաւիկին, որ հրամցնի թագաւորին: Մանկլաւիկը զանազան ձեւեր է անում, սպա աջ ծունկը գետնին դնելով եւ բարձրացնելով՝ մօտենում է Նազարին եւ հրամցնում քիշմիշ:)

ՆԱԶԱՐ.– (Ապտակելով մանկլաւիկին) Ի՞նչ ես ծռմռւում մեյմունի պէս: Քիշմիշը բեր, էլի՞:

ՄԱՆԿԼԱՎԻԿ.– (Քիշմիշը դնում է Նազարի թախտին:)

ՆԱԶԱՐ.– Ռա՛դ եղիր,

ՄԱՆԿԼԱՎԻԿ.– (Հեռանում է զանազան ձեւերով:)

ՆԱԶԱՐ.– (Սենեկապետին) Դո՛ւ ինչ տնկուեցիր իշի պէս:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Պատկերդ գեղեցկութեան, երեսհարքդ այսօր դեռ լուացուումն ու օծումն չի ընդունել արքայաբար:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Արդեօք վարդաջրո՞վ հաճելի կլինի թարմացնել երեսհարքդ, ստուեր արեգական, թէ այլ բուրալից թարմաշունչերով:

ՆԱԶԱՐ.– Չհասկացանք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Ձիւն մաքրութեան, այսօր դեռ չես լուացուել:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ հօրս ցաւն է էդ ամեն օր լուացուելը: Ծովաքա՞ր եմ, թէ լուացքի տաշտ: Չի լինի որ չլուացուեմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Կարգ է թագաւորաց: Գանձարան օրինապահութեան:

ՆԱԶԱՐ.– Իշի կարգ: Ամեն օր լուացուի, հա՛ լուացուի:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Կբարեհաճէի՞ր անցնել լողարանի օթեակը: Ձայն աւետեաց:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ, բաղնի՛ս:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Այո, տէր իմ, բաղնիս:

ՆԱԶԱՐ.– Երեսսրբիչը թրջի, բեր, թող վերջանա գնա: Ո՞վ գլուխ ունի տեղից վեր կենալու: